



International Parkinson and  
Movement Disorder Society

# Իմպուլսի վերահսկման խանգարումները Պարկինսոնի հիվանդության ժամանակ Անհրաժեշտ փաստեր հիվանդների համար

## ՈՐՈՂՔ ԵՆ ԻՄՊՈՒԼՍԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՈՐՔԱՆ ՀԱՃԱԽ ԵՆ ԴՐԱՆՔ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՊԱՐԿԻՆՍՈՆԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Իմպուլսի վերահսկման խանգարումները (ԻՎԽ) մի խումբ չափազանց արտահայտված և/կամ վնասակար մղումներ և վարքագծեր են, որոնք կարող են ի հայտ գալ Պարկինսոնի հիվանդություն (ՊՀ) ունեցող պացիենտների մոտ: Դրանք բնորոշվում են կայուն մտքերով կամ որոշ գործողություններ կատարելու չվերահսկվող մղումներով: Դրանք հաճախ հանդիսանում են որոշակի դեղամիջոցների կողմնակի ազդեցություններ:

## ԻՆՉՊԵՄ ԵՄ ԿԱՐՈՂ ԵՄ ԻՄԱՆԱԼ ԻՆՉ ՄՈՏ ԻՎԽ ՉԱՐԳԱՆԱԼՈՒ ՌԻՍԿԻ ՄԱՍԻՆ

ԻՎՀ ունեցող պացիենտների մոտ կարող է դիտվել հետևյալ վարք.

- չվերահսկվող խաղամոլություն,
- շատակերություն,
- ավելորդ գնումներ կատարելու հակում,
- սեռական գերակտիվություն:

Այս վարքը կարող է խնդրահարույց լինել, քանի որ կարող է բերել անձնական, ընտանեկան և սոցիալական խնդիրների: Օրինակ չվերահսկվող խաղամոլությունը կարող է լուրջ ֆինանսական խնդիրներ առաջացնել: Շատակերությունը կարող է քաշի ավելացման պատճառ դառնալ:

Մի այլ տարածված վարքագծերից է փանդինգը: Փանդինգն իրենից ներկայացնում է նույն գործողությունը նորից և նորից կրկնելը, օրինակ քանդել և նորից հավաքել համակարգիչը, դասավորել և վերադասավորել գրքերը գրապահարանում:

## ԱՐԴՅՈՒՔ ԻՎԽ ԿԱՊՎԱԾ Է ՀԱԿԱՊԱՐԿԻՆՍՈՆԱՅԻՆ ԴԵՂԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԵՏ

ԻՎԽ կարող է առաջանալ ՊՀ ունեցող ցանկացած անձի մոտ՝ անկախ բուժման տեսակից: Այնուամենայնիվ, ԻՎԽ ավելի հաճախ դիտվում է այն պացիենտների մոտ, որոնք բուժվում

են դոֆամինային ազոնիստներ կոչվող դեղորայքային խմբի պրեպարատներով: Դրանք ներառում են.

- պրամիպեքսոլը,
- ռոպինիրոլը,
- ռոտիգոտինը:

ԻՎԽ կարող է հազվադեպ դիտվել նաև այլ հակապարկինսոնային դեղամիջոցներով բուժվող կամ նույնիսկ բուժում չստացող հիվանդների մոտ:

## ԻՆՉՊԵՄ ԵՄ ԿԱՐՈՂ ԵՄ ԻՄԱՆԱԼ ԻՆՉ ՄՈՏ ԻՎԽ ՉԱՐԳԱՆԱԼՈՒ ՌԻՍԿԻ ՄԱՍԻՆ

Այն հիվանդները, որոնք հակում ունեն նորայն փնտրելու կամ նրանք, ովքեր իմպուլսիվ են, կարող են ունենալ ԻՎԽ ավելի բարձր ռիսկ: Խաղամոլության կամ ալկոհոլային կախվածության պատմությունը կարող է բարձրացնել Ձեր ռիսկը: Տղամարդիկ և ավելի երիտասարդ պացիենտները կարծես ավելի հաճախ են ԻՎԽ ունենում: Մակայն, ամենամեծ ռիսկը դոֆամինային ազոնիստների օգտագործումն է, հատկապես բարձր դեղաչափով:

## ԻՆՉ ՊԵՏՔ Է ԵՄ ԱՆԵՄ, ԵԹԵ ԿԱՍԿԱԾԵՄ ԻՆՉ ՄՈՏ ԻՎԽ

Ամենակարևոր քայլը, ԻՎԽ վաղ հայտնաբերումն է, քանի որ նրանք կարող են բերել լուրջ ֆինանսական և անձնական խնդիրների: Եթե կարծում եք, որ Դուք կամ մեկը, ում Դուք սիրում եք, ունի ԻՎԽ, ապա պատմեք դրա մասին Ձեր բժշկին: Դուք կարող եք խնդրել, որ գրույցը լինի անձնական և գաղտնի: Եթե այս իրավիճակի մասին դժվար է խոսել, Դուք կարող եք գրի առնել Ձեր խնդիրներն ու հարցերը և կիսվել դրանցով բժիշկի հետ Ձեր հանդիպման ժամանակ: Ինչպես այլ խնդիրների դեպքում, այս պարագայում էլ հաճախ օգտակար է, որ բժշկի մոտ այցելեք Ձեր ամուսնու, խնամակալի, ընկերոջ կամ հարազատի հետ: Նրանք կարող են օգնել Ձեզ գտնել այդ իրավիճակը հաղթահարելու ուղիներ:

Երբեմն ԻՎԽ ունեցող հիվանդները կարող են չգիտակցել դրանց առկայությունը կամ հետևանքները: Հիվանդները կարող են նույնիսկ թաքցնել ԻՎԽ: Այդ պատճառով խնամակալների և ընտանիքի անդամների համար շատ կարևոր է աշխատել բժշկի հետ միասին՝ ԻՎԽ հայտնաբերելու և վերահսկելու համար:



# Իմպուլսի վերահսկման խանգարումները Պարկինսոնի հիվանդության ժամանակ. Անհրաժեշտ փաստեր հիվանդների համար

## ԱՐԴՅՈ՞Ք ԻՎԽ ԿԱՐՈՂ Է ԲՈՒԺՎԵԼ

Այո, ԻՎԽ կարող է բուժվել: Առաջինը, Ձեր բժիշկը կարող է շտկել Ձեր հակապարկինսոնային դեղամիջոցները: Դոֆամինային ազոնիստի դեղաչափի նվազեցումը կամ նրա դադարեցումը հաճախ օգտակար է լինում: Դուք չպետք է դադարեցնեք կամ փոխեք Ձեր հակապարկինսոնային դեղերը առանց ստանալու բժշկական խորհրդատվություն: Բացառությամբ շատ ծանր ԻՎԽ, դեղամիջոցների աստիճանաբար փոփոխությունները կարող են օգնել խուսափել շարժողական ախտանիշների վատացումից: Որոշ դեպքերում, դոֆամինային ազոնիստների արագ դադարեցումը կարող է բերել տարատեսակ հանման ախտանիշների, ինչպիսիք են՝

- տագնապը,
- դեպրեսիան և ապաթիան,
- հոգնածությունը,
- քնի խանգարումները,
- զեներալիզացված ցավը:

Խորհրդակցեք հոգեկան առողջության որակավորված մասնագետի հետ, եթե ունեք նաև դեպրեսիա կամ տրամադրության այլ խանգարումները: Որոշ դեպքերում կարող են օգնել հոգեբուժական դեղամիջոցները:

ԻՎԽ հաղթահարելը կարող է դժվար լինել, սակայն Դուք կարող եք գտնել այն մարտավարությունը, որը կարող է առավելապես օգնել Ձեզ: Մի՛ պարփակվեք ինքներդ Ձեր մեջ և ունեցեք կանոնավոր հաղորդակցություն Ձեր բժշկի և խնամողների հետ: